

**ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե**  
**Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 62/10

27 դեկտեմբերի 2013 թ.

Քննարկվեց Սահակ Իշխանյանի 10.12.2013 թ-ի բողոքը ՀՀ ԿԱ ՊԵԿ ԽՀՎ ՀՏ պետի 20.11.2013 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 239131 որոշման դեմ:

**Սահակ Իշխանյանի բողոքում բերված փաստարկները.**

Խոշոր հարկ վճարողների ՀՏ 20.11.2013 թ-ի թիվ 239131 որոշմամբ «ԳՈՒԴ ԷՐԱՆՇ» ՍՊԸ տնօրենը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169<sup>12</sup> հոդվածով ենթարկվել է վարչական տույժի՝ 500.000 դրամի չափով, այն բանի համար, որ 28.08.2013 թ-ի թիվ 231085 որոշմամբ սահմանված տուգանքի նշանակման օրվանից հետո 30 օրվա ընթացքում «ԳՈՒԴ ԷՐԱՆՇ» ՍՊԸ 2012 թ-ի ֆինանսական հաշվետվությունը չի հրապարակել:

Բողոքաբերը 26.11.2013 թ-ի բողոքում հայտնել է, որ 2013 թ-ի մարտ ամսից այդ ընկերության տնօրեն չի հանդիսացել և որպես ընկերության տնօրեն չէի կարող այդ հաշվետվությունը հրապարակել:

02.12.2013 թ-ի գրությամբ տրվել է պատասխան, որից հետևում է, որ բողոքաբերը տուգանվել է ոչ թե որպես ընկերության տնօրեն, այլ՝ ընկերության մասնակից, պատճառաբանությամբ, որ ընկերության տնօրենի պաշտոնից ազատումից հետո ընկերության մասնակիցը կարող էր հրապարակել այդ ֆինանսական հաշվետվությունը: Ստացվում է, որ 02.12.2013 թ-ի գրությամբ 20.11.2013 թ-ի թիվ 239131 որոշման լրացում է կատարվել՝ տնօրենը փոխարինվել է ընկերության մասնակցով, ինչի իրավունքը վերադասության կարգով բողոքի քննության փուլում չունեն վերադաս վարչական մարմինը: Այս պայմաններում օբյեկտիվ մոտեցում չի ցուցաբերվել, արդարացիորեն չի գնահատվել իրավիճակը:

Վերադաս վարչական մարմինը 02.12.2013 թ-ի գրությամբ նշել է, որ բողոքաբերը որպես ընկերության մասնակից պետք է 30 օրվա ընթացքում կատարեր հրապարակումը, մինչդեռ 30 օրվա ընթացքում այդ հաշվետվությունը հրապարակելու պարտականությունը մեկ այլ վարչական ակտով սահմանված է եղել ոչ թե ընկերության մասնակցի, այլ տնօրենի համար, որոնք տարբեր գործառույթներ իրականացնող անձինք են:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169<sup>12</sup> հոդվածի բովանդակությունից հետևում է, որ առաջին անգամ վարչական պատասխանատվության ենթարկված սուբյեկտը պետք է կատարի հրապարակումը, որը չկատարելու դեպքում վրա է հասնում ավելի խիստ վարչական պատասխանատվության միջոցը: Նշված հոդվածի բովանդակությունից հետևում է նաև, որ 2-րդ մասով սահմանված տուգանքը կարող է նշանակվել բացառապես 1-ին մասով տուգանքի ենթարկված սուբյեկտի նկատմամբ: Տվյալ դեպքում հոդվածի 1-ին մասով տուգանքը նշանակվել է ընկերության տնօրենի նկատմամբ, իսկ 2-րդ մասով՝ ընկերության մասնակցի, որոնք տարբեր գործառույթներ իրականացնող սուբյեկտներ են: Նշվածից ելնելով ընկերության մասնակցի նկատմամբ չէր կարող կիրառվել նշված հոդվածի 2-րդ մասով սահմանված տուգանքը:

Բացի այդ, որևէ նորմով ընկերության մասնակցի վրա հաշվետվություն հրապարակելու պարտականություն դրված կամ այդպիսի գործառույթ սահմանված չէ, թեև 02.12.2013 թ-ի գրությամբ նշվել է, որ ընկերության մասնակիցը պետք է հրապարակեր հաշվետվությունը:

<Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին> ՀՀ օրենքի այն դրույթներում, որոնցով սահմանված են ընկերության մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները, առկա չէ որևէ դրույթ, որի համաձայն ընկերության մասնակիցը պարտավոր է հրապարակել այդ հաշվետվությունը:

Նշվածից ելնելով բողոքաբերը խնդրում է վերացնել Խոշոր հարկ վճարողների ՀՏ պետի 20.11.2013 թ-ի թիվ 239131 որոշումը:

**ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ բողոքը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ խոշոր հարկ վճարողների հարկային տեսչությունում իրականացված վարչական վարույթի ընթացքում պարզվել է, որ «ԳՈՒԴ ԷՐԱՆՇ» ՍՊԸ-ն պարտավոր էր հրապարակել 2012 թ-ի ֆինանսական հաշվետվությունը (այսուհետ նաև հաշվետվություն): Ըստ վարչական վարույթի արդյունքում ձեռք բերված տեղեկությունների՝ նշված հաշվետվության հրապարկման պարտականությունը կրել է Սահակ Իշխանյանը, քանի որ վերջինս հանդիսանում է «ԳՈՒԴ ԷՐԱՆՇ» ՍՊԸ միակ մասնակիցը /հիմնադիրը/, իսկ իր՝ որպես տնօրենի, լիազորությունները դադարելուց հետո որևէ այլ անձ իրավասու չի եղել հրապարակել հաշվետվությունը: Այսպիսով, չնայած այն հանգամանքին, որ Սահակ Իշխանյանը 2013 թ-ի մարտ ամսից այլևս չի հանդիսացել «ԳՈՒԴ ԷՐԱՆՇ» ՍՊԸ տնօրեն, նշված հանգամանքը չի ազատել վերջինիս հաշվետվությունը հրապարակելու պարտականությունից:

«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի համաձայն «Կազմակերպությունները, որոնց ֆինանսական հաշվետվություններն օրենքին համապատասխան ենթակա են հրապարակման, պարտավոր են տարեկան հաշվետվությունները հրապարակել մինչև հաշվետու տարվան հաջորդող հուլիսի 1-ը»: Վերոգրյալ իրավանորմից հետևում է, որ օրենքով հրապարակման ենթակա համապատասխան ֆինանսական հաշվետվությունների հրապարակման պարտականությունը դրված է կազմակերպությունների վրա, ընդ որում, օրենսդիրը չի հստակեցնում, թե կազմակերպության կոնկրետ որ պաշտոնատար անձը պետք է դա իրականացնի:

Քննարկվող դեպքում «ԳՈՒԴ ԷՐԱՆՇ» ՍՊԸ միակ հիմնադիրը և մասնակիցը (պաշտոնատար անձը) հանդիսանում է Սահակ Իշխանյանը, այսինքն՝ հենց վերջինս էլ ոչ միայն իրավասու էր, այլև պարտավոր էր օրենքով սահմանված կարգով հրապարակել հաշվետվությունը: Ավելին, Սահակ Իշխանյանը հնարավորություն է ունեցել հրապարակել հաշվետվությունը որպես տնօրեն իր լիազորությունները դադարելուց առաջ /օրինակ փետրվար ամսին/ կամ էլ՝ միջոցներ ձեռնարկել իր կամ որևէ այլ անձի կողմից այն հրապարակելու ուղղությամբ:

Վերոգրյալից ըստ էության հետևում է, որ հաշվետվությունը չհրապարակվելու գործում միակ մեղավորը հանդիսացել է Սահակ Իշխանյանը:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ Սահակ Իշխանյանին վարչական պատասխանատվության ենթարկելու ՀՀ ԿԱ ՊԵԿ ԽՀՎ ՀՏ պետի 20.11.2013 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 239131 որոշումը հիմնավոր է և ընդունվել է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով ՀՀ արկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

**ո թ ո շ ու մ է՝**

ՀՀ ԿԱ ՊԵԿ ԽՀՎ ՀՏ պետի 20.11.2013 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 239131 որոշումը թողնել անփոփոխ, իսկ բողոքը՝ առանց բավարարման:

**Հանձնաժողովի նախագահ՝**



**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**